

ՄԻԼԱՆԻ ՀՐՈՎԱՐԺԱԿԻ

313—1913

Անցեալ շաբաթ, սեպտեմբերի 14-ին, քրիստոնեայ աշխարհը տօնեց Միլանի հրովարտակի 1600-ամ-հակը:

Այս պատմ. հրովարտակի նշանակութիւնը իր ամբողջութեամբ հասկանալու համար, պէտք է պատկերացնել քրիստոնէութեան առաջին երեք դարում կրած հալածանքները, որ մարտիրոսագրութեան մի սոսկալի էջ է կազմում մարդկութեան պատմութեան մէջ:

Երբ Քրիստոսի աշակերտուներն ու առաքեալներն ցրուեցին աշխարհիս չորս կողմը ուսուցանելու Հրէաստանի տաք երկնքի տակ ծնուած նոր վարդապետութեան սկզբունքները, հարկադրելու հին, նեխուած կեանքին, բարյական վերածնութեան նոր սկզբունքներ,—քրիստոնէութեան հետևողների դէմ սկսեց բուռն հալածանք, որի նմանը դեռ երբէք տեսնուած չէր:

Հին աշխարհի կողմն էր կոսփր ոյժը, իշխանութիւնը, իսկ նոր վարդապետութեան հետևողների՝ հեղութիւն, սէր և անդրդուելի հաւատ:

Ամբողջ երեք գար տեսեց մինչև կռիւր նոր վարդապետութեան վերջնական յաղթանակը,—յաղթանակ, որ համանք էր մի կողմից՝ քրիստոնէական սկզբունքների վեհութեան, միւս կողմից կոսպաշտական վարդապետութեան անբաւարարութեան և քայլայման:

Քրիստոնեաներին մեղադրում էին անաստցւածութեան մէջ, որովհետ նրանք հրաժարւում էին երկրպագել կուռքքին, մեղադրում էին նաև մարդասեցութեան մէջ, որովհետ նրանք համայնական ինքնուրոյն կեան քի և հանդերձեալ կեանքի հաւատի մէջ տեսնում էին ատելութիւն դէպի իրենց նմանները:

Եւ ահա սկսում է հաւածանքը, հռոմէական կայսրների դեկավրութեամբ Ներսոնի, Դիոկլիտիանոսի և շատ կայսրերի անունները մոտած են քրիստոնէութեան ամենասիների թշնամիների ցանկում:

Եւ այդ հաւածանքը տեղի էր ունենում ոչ միայն Հռոմում, այլ և ամբողջ Կոստութեան մէջ, Եւրոպայում Փոքր-Ասիայում և Ա. Ք. Ք. կայում:

Քրիստոնեաներին բանտարկում էին, նրանց ինչքը գրաւում, ենթարկում ամեն տեսակ ծաղրի ու ծանակի. Հռոմէական կրկեսների յատակները ողողուած են քրիստոնեայ ժաղովրդի արիւնով:

Սարսափելի էին մանաւանդ. Դիոկլիտիանոսի հալածանքները, որի սարսափները մեզ քաջ յայտնի են մեր ազգային-եկեղեցական պատմութիւնից:

Երբ հռոմէական կայսրութեան արևելեան մասում սկսուեց ներքին խռովութիւն, կռիւ Կոստանդիանոսի և Մականցի մէջ, վերջինս իրեն յայտարարեց քրիստոնէութեան անհաջող թշնամի, և այսպիսով քրիստոնեաների համակրանքը մղեց դէպի Կոստանդիանոսը, որի հայրը, ի դէպ, նոյնական համբերատար և քրիստոնեայ վարչէ էր նղած, Կոստանդիանոսը յաղթող եղաւ այս կռւում և իրեն յայտարարելով հռոմայեցոց կայսր՝ ցանկացաւ երախտապար լինել քրիստոնեաներին: Բայց դրա համար հարկաւոր էր կայսրութեան արևելեան մասի համաձայ-

նութիւնը որ կառավարում էին Լիցինիոսը՝ քրիստոնեաների բարեկամը և նրանց թշնամի Մաքսիմին, Կոստանդիանոսը միացած Լիցինիոսի հետ յաղթեց քրիստոնէութեան ազատութեան արդ վերջին թշնամուն, և երկուքը միասին 312—313 թուի ձմռանը Միլան քաղաքում հրատարակեցին խզի ազատութեան իրենց յայտնի հրովարտակը: Ահա այդ պատմական խորոր դոկումենտի ներածութիւնը:

«Մենք Կոստանդիանոս և Լիցինիոս, Օգոստափառներս, ժողովելով Միլան խորհրդակցելու կայսրութեան բարեկարգութեան վերաբերալ գործերի մասին, վճռեցինք որ մեզ զբաղեցնող խնդիրների մէջ ոչ մէկը այնքան օգտակար չի կարող լինել, որքան Աստծուն ծառայելու կանոնաւորումը»:

«Մենք վճռեցինք քրիստոնեաներին և միւս բոլորին պարգնել իրենց գերադասած կրօնը ազատ դաւանելու իրաւունքը, որպէսզի երկնքում թագաւորող աստուածութիւնը միանը ողորմած և բարեհայեց լինի մեզ և նրանց, որոնք ապրում են մեր թագաւորութեան մէջ»:

«Մեզ թւում է, որ լաւ և խելացի կը լինի չարգել մեր հապատակներից և ոչ ոքի—լինի նա քրիստոնեայ թէ այլ կրօնի—հետևել այն հաւատին, որն աւելի նախագասելի է իրեն: Այսպիսով վերին աստուածութիւնը, որին այսուհետեւ ամեն ոք կարող է ազատօրէն երկրպագել, կուղարկէ մեզ իր ողորմութիւնն ու օրհնութիւնը»:

«Ելիս սպատճառով հարկաւոր է, որ Պատինան, թէ մենք վերացնում ենք քրիստոնեաներին վերաբերեալ նախկին հրովարտակների բոլոր սահմանափակումները և այսուհետեւ մենք թոյլ ենք տալու նրանց պահել իրենց կրօնը առանց որեէ երկիւղի և վիրաւորանքի»:

«Մենք ցանկացնք յայտարարել այս մասին, որպէսզի յայտնի լինի, թէ մենք բախում ենք քրիստոնէաներին կատարեալ և անսահման ազատութիւն իրենց ծիսակատարութեան համար: Եւ որովհետեւ այդ թոյլատրուում է քրիստոնեաներին, ուրեմն հասկանալի է, որ միւսները ևս պիտի օգտառին այդ ազատութիւնից»:

«Արժանի է այն գարին, ուր մենք ապրում ենք, և համապատասխան այն խաղաղութեան, որ մենք վայելում ենք, որպէսզի մեր բոլոր հապատակները ազատ կերպով ծառայեն իրենց ընտրած Աստծուն և որ ոչ մի կրօն զրկուած չինի իրեն վայել յարգանքից»:

Այս պատմական հրովարտակը միջոց առաց քրիստոնէութեան ազատ ու արագ զարգանալ և տիրել աշխարհներ վեց ու մաքուր բարոյական սկզբունքներով:

ՀԱՄԱԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈՒՆԵՏԱՆ

412—1912 || 1512—1912

(Պաշտօնական)

Տօնակարգը Ա. Էջմիածնում.

Ուրբաթ հոկտեմբերի 11-ին, երեկոյեան յամը 5-ին, Նորին Վեհապատութիւնը պատգամաւորների և ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ՝ հանդիսաւոր թափօրով

իջնում է Մայր Տաճար՝ ներկայ լինելու ս. Թարգմանչաց յիշատակին կատարուելիք նախատօնակին:

* *

Շաբաթ ս. Թարգմանչաց տօնին, հոկտեմբերի 12-ին, առաւտան ժամը 8-ին հանդիսաւոր երթ Նորին Վեհապատութեան Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի Օշական՝ ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորների:

Պատարագ (10-ին) ս. Մեսրոպի գերեզմանի վրայ Հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին. պատգամաւորների բանախօսութիւնների:

Ծաշ (2-ին). ուղերձների ընթերցում:

* *

Կիրակի հոկտեմբերի 13-ին, ժամը 9-ին, Մայր Տաճարի իջման սեղանի վրայ հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք:

Պատարագից յետոյ՝ ժամը 12-ին, ծեմարանում ցերեկոյթ երգեցողութեամբ և երաժշտութեամբ:

Ծաշ ժամը 3-ին, հուազիրների ընթերցում:

Շաբաթ և կիրակի երեկոները ժամը 7-ին և երկուշարթի առաւտան 10-ին՝ ծեմարանում գիտական րեփերատներ և խորհրդակցութիւն ուղղագրութեան խընդիրների շուրջը:

Ժանօթ. — Եարաթ և կիրակի երեկոները երաժշտութիւն և հրավառութիւն Վանքի և ծեմարանի բակում:

Տօնակարգը հայոց բոլոր քեմերում.

Շաբաթ, հոկտեմբերի 12-ին ս. Թարգմանչաց տօնի օրը՝ եկեղեցական դասի, դպրոցական ամբողջ կազմի, ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների և աշակերտութեան ներկայութեամբ՝ հանդիսաւոր պատարագ և բացատրութիւն երկու մեծ տօների պատմական նշանակութեան:

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան արուեստի վաստակաւորների յիշատակին:

* *

Կիրակի հոկտեմբերի 13-ին հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք նոյն կազմով:

Նոյն օրը՝ տեղական պայմաններին հայելով, կազմակերպել գրական և երաժշտական ցերեկոյթ կամ երեկոյթ՝ եկեղեցական, կրթական և այլ ազգային հաստատութիւնների պաշտօնատար անձանց ներկայութեամբ։ Հանդէսը բանալ «Հայր մեր» ով և ս. Թարգմանչաց կամ ս. Էջմիածնի շարականով։

Ժանօթ. — շատ եկեղեցիներ ունեցող կեղրոններում եկեղեցական հանդէսները կարող են կատարուել մի կամ մի քանի եկեղեցիներում՝ տեղական նոդերը Վարչութեան կարգութեամբ։

* *

Այս ժրադիրը կազմուած է յատուկ ս. Էջմիածնին ենթակայ հաստատութիւնների համար։ Միւս բոլոր հաս-

տատութիւններից խնդրուում է պատուել այս Համագումանին մեծ տօնը պատշաճաւոր հանդէսներով և յաւերժացնել բարենպատակ ձեռնարկութիւններով։

ԱՐԺԱՆԱՒՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մեկ յօյս ու հաւատ է ներշնչում այն գործելակերպը, զորս կ. Պոլսոյ Հայոց Ազգ. ժողովը, լինին թէ ձախակողմեանք, թէ աջակողմեանք և թէ սահմառամկավարականք, ըմբռելով ներկայի պահանջը, յետ այնքան տատանումների, վերջապէս համոզուած են անել արժանաւոր ընտրութիւն, պատրիարք ընտրել (այս 1913 թ. օգոստ 30-ին) Վանի նախկին և Տիգրանակերտի ներկայ առաջնորդ ամեն. Տ. Զաւէն եպ. Եղիանին։

Կ. Պոլսի հայոց պատրիարքութիւնը բովանդակ տաճկահայոց և մասամբ արտասահմանի հայութեան կենտրոնի ամենագլխաւոր ներկայացուցիչ լինելով հանդերձ, ամենամեծ պարտաւորութեան և պատասխանատւութեան ենթակայ մի պաշտօն է։ Մէկ կողմը թողած այն կուսակցական պայքարը՝ Ազգ. երեցփոխանք պարտաւոր էին խզի մտօք անել այդ արժանաւոր ընտրութիւնը, մատնանշելով մի բարձր հոգեսորականի վրայ, որոյ համբաւն արդէն իր ետակից ու առջնից էր գնում տասնհինգ տարիից ի վեր։

Գաւառական կենդրոններում տաճկահայ եպիսկոպոս վարդապետ առաջնորդների համար պաշտօն ունենալը մի փորձնական բով է, մի շիկացած բով Այդ բովից անցնողն ու զտուողը, եթէ կարողացաւ ճշմարիտ հոգուի գերը կատարել հոգոյ արիւթեամբ յօգուա ազգի և եկեղեցոյ, նա արդէն նշանաւում է ապագայի պարբերացուն։ Այդպէս են եղել մեծագործ Գէորգ Գ. հանգուցեալ կաթողիկոս, երջանկայիշատակ ներսէս Վարժապետական, այդպէս և հանդ. կաթողիկոս Խոմիրլեան, և այդպէս ներկայ պատրիարք ամեն. Տ. Զաւէն եպիսկոպոսուն:

Ամենապատիւ Տ. Զաւէն եպիսկոպոսի վերաբերեալ տեղեկութիւնները մենք միշտ լսել ու կարդացել ենք այն, ինչ որ ճշմարիտ ու իրաւականն է, որ Նորին ամենապատութիւնը տասնեհինգ տարիներէ ի վեր լինելով գաւառներում և վերջերս Վապանականի և Տիգրանակերտի բարձր վիճակներում ատարել է իր պաշտօնը ուղղամիտ վարդապետութեամբ, շրջանայեաց ուղղութեամբ։

Զարմանք չէ այն, որ կենդրոնից ումանք—դաշնակցականք չէ զորք դիրք են ունեցել գէպի ընտրութիւնը յանձին Զաւէն եպիսկոպոսի, որովհետեւ Աղթամարի վանուց ծանօթ խնդրոյն մէջ Արքազանը ցոյց տուեց նախանձախնդրութիւն գէպի հայ եկեղեցին, ի մասնաւորի գէպի Աղթամարի վանքը և այդ տեղից տուեց մի շաքը անխորդութեանց։ Բայց վանեցի ազգայինք ընդհանրապէս գոհ մնացին Նորին Արքազանութեան արդարակորով